«ՔՐԵԱԾԻՆ» ՏՏ ԱՌԱՋԸՆԹԱՑ. ԿԻԲԵՌՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.4-71

Կիբեռահաբեկչությունը կարող է էլ ավելի գրավիչ դառնալ, քանի որ իրական և վիրտուալ աշխարհներն ավելի սերտորեն են զուգակցվում՝ համացանցին միացված մեքենաներով, տեխնիկայով և այլ սարքերով:

Դորոթի Է. Դենինգ

Հիմնաբառեր. *կիբեռհանցավորություն, կիբեռխարդախություն, կիբեռանվտանգություն, համացանց, համակարգիչներ*

Նոր տեխնոլոգիաները ծնում են նոր տեսակի հանցագործություններ՝ միաժամանակ ընդլայնելով ավանդական հանցավոր գործունեության հնարավորությունները: Ներկայումս լայնորեն տարածվող կիբեռհանցագործություններից շատերն ավանդական հանցատեսակների՝ թվային լուծումների կիրառմամբ կատարելագործված դրսևորումներ են, որ գոյություն են ունեցել նախքան «կիբեռ-» սկզբնարմատի ի հայտ գալը:

Կիբեռհանցավորության մակարդակի և դրսևորումների վերաբերյալ վիճակագրությունը թեև կցկտուր է և չափազանց սահմանափակ, այդուհանդերձ, հասանելի տվյալների վերլուծությունը վկայում է, որ ամբողջ աշխարհի կիբեռտիրույթում ապօրինությունների ծավալն աննախադեպ կերպով աճում է և շարունակաբար կատարելագործվում:

Բիզնես տվյալներն էլեկտրոնային ձևաչափի վերածելու գործընթացի արագացումը գործարար հատվածի համար մշտական բեռ է ստեղծում՝ տվյալների պաշտպանության և կիբեռանվտանգության տեսանկյունից:

Կիբեռհանցագործությունը համակարգչի, համակարգչային ցանցի կամ ցանցային սարքի թիրախավորմամբ կամ օգտագործմամբ իրականացվող հանցավոր գործունեություն է:

Կիբեռհանցագործությունների մեծ մասը թեև կատարվում է ֆինանսական դրդապատճառներով, այնուամենայնիվ, երբեմն կիբեռհանցագործների կամ հաքերնե-

Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ:

Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 50-ից ավելի գիտական և շուրջ երեք տասնյակ գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

https://orcid.org/0000-0002-5854-2473

Google Scholar profile: https://scholar.google.com/citations?user=sjZSaYsAAAAJ&hl=ru
Research Gate profile: https://www.researchgate.net/profile/Anna-Pakhlyan

րի (ցանցահենների) կողմից համակարգիչները կամ ցանցերը վնասելը կարող է հետապնդել քաղաքական կամ անձնական նպատակ:

Կիբեռհանցագործությունն անդրազգային հանցագործության զարգացող ձև է: Վերջինիս բարդ բնույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցագործությունը տեղի է ունենում սահմաններից զուրկ կիբեռտարածության տիրույթում՝ կազմակերպված հանցավոր խմբերի աճող ներգրավվածությամբ:

Ի տարբերություն ավանդական հանցագործության, որը, որպես կանոն, տեղի է ունենում մեկ աշխարհագրական վայրում, կիբեռհանցագործությունը կատարվում է առցանց և հաճախ հստակորեն կապված չէ որևէ աշխարհագրական վայրի հետ, ինչն էլ դժվարացնում է դրա բացահայտումը՝ պահանջելով համակարգված պայքար:

Թեև գոյություն չունի կիբեռհանցագործությունների հստակ դասակարգում, դրանց աճող բազմազանությունից առանձնացրել ենք հետևյալ հիմնական ձևերը.

- խարդախություն՝ էլեկտրոնային փոստի և համացանցի միջոցով (Email and internet fraud),
- խարդախություն՝ անձնական տվյալների օգտագործմամբ (երբ գողացվում և օգտագործվում են ինքնությունը բնութագրող անձնական տվյալները) (Identity fraud),
- ֆինանսական կամ վճարային քարտի տվյալների գողություն (Theft of financial or card payment data),
- կորպորատիվ տվյալների գողություն և վաճառք (Theft and sale of corporate data),
- կիբեռշորթում (հարձակումը կանխելու համար՝ սպառնալիքով գումարի պահանջում), (Cyberextortion)
- շորթող ծրագրերի կիրառմամբ գրոհներ (Ransomware attacks, կիբեռշորթման տարատեսակ),
- կրիպտոջեքինգ (Cryptojacking), երբ հաքերները թողարկում են կրիպտոարժույթ՝ օգտագործելով իրենց չպատկանող ռեսուրսները,
- կիբեռլրտեսություն (Cyberespionage), երբ հաքերները մուտք են գործում կառավարության կամ մասնավոր ընկերության տվյալներ,
- այնպիսի միջամտություն համակարգերին, որը վտանգում է ցանցը,
- հեղինակային իրավունքի խախտում,
- ապօրինի մոլախաղեր (Illegal gambling),
- ապօրինի իրերի առցանց վաճառք,
- մանկական պոռնոգրաֆիա պարունակող նյութեր պահանջել, արտադրել կամ տիրապետել և այլն:

Ցանկը կարող է և ամբողջական չլինել, քանզի կիբեռտիրույթի հանցատեսակները կատարելագործման հակում ունեն:

Ընդհանրապես, համացանցի ազդեցությունը հանցավոր հնարավորությունների վրա արտահայտվում է երեք մակարդա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ինքնությունը բնութագրող անձնական տվյալների գողության զոհերն ընտրված երկրներում, 2022 թ. (մլն մարդ)[1]

[1] Statista, Identity theft victims in selected countries 2022, Published by Ani Petrosyan, Sep 11, 2024, https://www.statista.com/statistics/1389318/identity-theft-victims-in-selected-countries/ (Accessed: 01.11.2024).

կով: Մի կողմից՝ համացանցն ավելի լայն հնարավորություններ է ընձեռում ֆիզիկական կամ «իրական» աշխարհում արդեն իսկ գոյություն ունեցող ավանդական հանցագործությունների (կեղծիք, խարդախություն և հետապնդում) կատարման առումով, մյուս կողմից՝ ակտիվացնում է նոր միջոցների կիրառումը, ինչպիսիք են՝ հաքերային հարձակումները, վիրուսները, լայնածավալ խարդախությունները և այլն: Եվ վերջապես, համացանցի ազդեցությունը հանգեցնում է նոր տեսակի հանցագործությունների համար նոր հնարավորությունների ստեղծմանը (սպամ, մտավոր սեփականության հափշտակություն և էլեկտրոնային աճուրդի միջոցով խարդախություններ)[2]:

Ինքնության գողության (identity theft) վիճակագրությունը, ըստ երկրների, չափազանց տարբերվում է: Ինչպես կիբեռտիրույթում կատարվող մյուս հանցատեսակների դեպքում, այս պարագայում ևս խթանիչ դեր են ունենում այնպիսի գործոններ, ինչպիսիք են համացանցի ներթափանցումը մարդկանց անձնական և գործնական տիրույթներ, թվային անվտանգության միջոցների թերացումները և հանրային իրազեկվածության ոչ պատշաճ մակարդակը:

Ուսումնասիրված երկրների շարքում 2022 թվականին Հնդկաստանն աշխարհում առաջին տեղն է զբաղեցրել ինքնությունը բնութագրող անձնական տվյալների գողության զոհ դարձածների՝ 27,2 միլիոնի հասնող թվով (գծապատկեր 1): Վերջինիս հաջորդում են ԱՄՆ-ն, որտեղ նույն ժամանակահատվածում ինքնության գողության հետ բախվեցին մոտավորապես 13,5 միլիոն սպառողներ: Երրորդ նշանակալի «զոհը» Ճապոնիան է՝ տարեկան 3 մլն ցուցանիշով:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակը (ՄԱԹՀՊԳ) (անգլ.՝ United Nations Office on Drugs and Crime, UNODC), որը զբաղվում է թմրամիջոցների, զենքի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցագործությունների, մարդկանց առևտրի և միջազգային հանցագործությունների դեմ պայքարով, վարում է աշխարհի տարբեր ծայրերում այս կամ այն հանցատեսակի տարածվածության վերաբերյալ վիճակագրություն: UNODC-ի տվյալների շտեմարանի «Կոռուպցիա և տնտեսական հանցագործություն» բաժնի ցուցանիշներում առանձնացված է նաև «կիբեռխարդախություն» (fraud cyber-related) կատեգորիան, որի վերաբերյալ առկա վիճակագրությունն ամփոփ տեսքով արտացոլված է գծապատկեր 2-ում:

Գծապատկերից ակնառու է դառնում,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Կիբեռխարդախությունների տարածվածությունն ըստ տարածաշրջանների (դեպքերի թիվ)[3]

[2] Jahankhani, Hamid & Al-Nemrat, A. & Hosseinian-Far, Amin. (2014). Cyber crime Classification and Characteristics. Chapter: 12, In book: Cyber Crime and Cyber Terrorism Investigator's Handbook, Elsevier Science, November 2014, pp. 149-164, 10.1016/B978-0-12-800743-3.00012-8.

[3] United Nations Office on Drugs and Crime (UNODC), Corruption & Economic Crime https://dataunodc.un.org/dp-crime-corruption-offences (Accessed: 01.10.2024).

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Կիբեռխարդախության դեպքերի վերաբերյալ UNODC-ի վիճակագրությունն ըստ տարածաշրջանների[4]

Աշխարհամաս/տարածաշրջան	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Աֆրիկա	-	187	-	-	-	35	-	222
Հյուսիսային Աֆրիկա[5]	-	-	-	-	-	35	-	222
Ենթասահարային Աֆրիկա[6]	-	187	-	-	-	-	-	
Ամերիկա	24,510	24,290	19,983	38,777	45,330	102,034	65,370	72,158
Հյուսիսային Ամերիկա[7]	9,315	12,471	14,788	18,294	25,084	35,305	42,260	41,340
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ[8]	15,195	11,819	5,195	20,483	20,246	66,729	23,110	30,818
Ասիա[9]	4,708	6,324	5,101	5,828	7,952	13,123	18,782	36,034
Արևելյան Ասիա[10]	361	948	581	742	371	579	524	622
Հարավարևելյան Ասիա[11]	4,207	4,320	4,419	4,928	7,580	12,242	18,258	34,748
Արևմտյան Ասիա[12]	140	1,056	101	158	1	302	-	664
Եվրոպա	361,537	467,336	505,131	625,337	570,220	685,624	686,247	719,660
Արևելյան Եվրոպա[13]	40,197	39,284	39,231	45,392	69,712	71,723	83,391	97,786
Հյուսիսային Եվրոպա[14]	104,013	128,278	134,604	173,238	4,459	11,997	12,913	16,244
Հարավային Եվրոպա[15]	27,576	106,573	143,140	199,551	272,209	357,149	326,539	343,633
Արևմտյան Եվրոպա[16]	189,757	193,201	188,156	207,155	223,840	244,755	262,404	261,997

---

[4] UNODC, Corruption and economic crime / Fraud: Cyber-related (Cy), https://datanodc.un.org/dp-crime-corruption-offences (Date of access: 01.10.2024).

[5] Հյուսիսային Աֆրիկան աղյուսակում ներկայացված է միայն ըստ *Ալժիրի* և *Մարոկկոյի* ցուցանիշների: Եգիպտոսի, Լիբիայի, Սուդանի և Թունիսի վերաբերյալ տվյալներ առկա չեն:

[6] Ենթասահարային Աֆրիկան ներկայացված է միայն ըստ *Մենեգալի* և *Ուգանդայի* ցուցանիշների: Մինչդեռ տարածաշրջանի մի խումբ երկրներ, ինչպիսիք են Անգոլան, Բենինը, Բոթսվանան, Բուրկինա Ֆասոն, Բուրունդին, Գաբոնը, Գամբիան, Գանան, Գվինեան, Գվինեա-Բիսաուն, Էկվատորային Գվինեան, Էրիթրեան, Էսվաթինին, Եթովպիան, Զամբիան, Զիմբաբվեն, Կամերունը, Կաբո Վերդեն, Կոս դ'Իվուարը, Լեսոտոն, Լիբերիան, Մադագասկարը, Մալավին, Մալին, Մավրիտանիան, Մոզամբիկը, Նամիբիան, Նիգերը, Հարավային Աֆրիկան, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, Կոմորոսը, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունը, Կոնգոյի Հանրապետությունը, Չադը, Ջիբութին, Ռուանդան, Սաո Տոմե և Պրինսիպին, Սեյշելները, Սիերա Լեոնեն, Սոմալին, Սուդանը, Տանզանիան, Տոգոն, Քենիան, UNODC-ի տվյալների շտեմարանում չեն ներառվել:

[7] Հյուսիսային Ամերիկայից աղյուսակում ընդգրկված են բացառապես *Կանադայի* ցուցանիշները: Տարածաշրջանի երկրներից UNODC-ի տվյալների շտեմարանից դուրս են մնացել ԱՄՆ-ն, Բերմուդյան կղզիները և Գրենլանդիան:

[8] Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ՝ *Անտիգուա* և *Բարբուդա, Բահամներ, Բարբադոս, Բելիզ, Չիլի, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Դոմինիկա, Դոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Էլ Սալվադոր, Գրենադա, Գայանա, Հոնդուրաս, Ճամայկա, Մեքսիկա, Պարագվայ, Պերու, Պուերտո Ռիկո, Սենթ Քիթս* և *Նևիս, Սենթ Վինսենթ* և *Գրենադիններ*: Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրներից ներառված չեն Արգենտինան, Բոլիվիան, Բրազիլիան, Գվատեմալան, Կուբան, Հայիթին, Նիկարագուան, Պանաման, Սենթ Լյուսիան, Սուրինամը, Տրինիդադ և Տոբագոն, Ուրուգվայն ու Վենեսուելան:

[9] Հարավային Ասիան և Կենտրոնական Ասիան աղյուսակում ներառված չեն՝ տարածաշրջանի երկրներում կիբեռխարդախության դեպքերի վերաբերյալ վիճակագրության բացակայության պատճառով: Հարավային Ասիայում են տեղակայված Աֆղանստանը, Բանգլադեշը, Բութանը, Հնդկաստանը, Իրանը, Մալդիվները, Նեպալը, Պակիստանը, Շրի Լանկան: Կենտրոնական Ասիայի երկրներն են Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը:

[10] Արևելյան Ասիա՝ *Չինաստան, Մակաոյի հատուկ վարչական շրջան, Ճապոնիա, Մոնղոլիա*: Ցուցանիշներում ներառված չեն Հյուսիսային Կորեայի, Հարավային Կորեայի և Թայվանի տվյալները:

[11] Հարավարևելյան Ասիա՝ *Սինգապուր, Թաիլանդ*: Տարածաշրջանի երկրներից Բրունեյի, Կամբոջիայի, Թիմոր-Լեստեի, Ինդոնեզիայի, Լաոսի, Մալայզիայի, Մյանմարի, Ֆիլիպինների և Վիետնամի վերաբերյալ վիճակագրություն առկա չէ:

[12] Արևմտյան Ասիա՝ *Հայաստան, Ադրբեջան, Լիբանան, Օման, Արաբական Միացյալ Էմիրություններ*: Արևմտյան Ասիայի երկրներից Բահրեյնի, Եմենի, Թուրքիայի, Իրաքի, Իսրայելի, Կիպրոսի, Հորդանանի, Պաղեստինի, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Վրաստանի, Քաթարի և Քուվեյթի տվյալները բացակայում են:

[13] Արևելյան Եվրոպա՝ *Բուլղարիա, Չեխիա, Լեհաստան, Ռուսաստանի Դաշնություն, Սլովակիա*: Վիճակագրական տվյալներ չեն տրամադրել Բելառուսը, Հունգարիան, Մոլդովան, Ռումինիան և Ուկրաինան:

[14] Հյուսիսային Եվրոպա՝ *Ֆինլանդիա, Իսլանդիա, Իռլանդիա, Լիտվա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն*: Տարածաշրջանի երկրներից Դանիայի, Էստոնիայի, Լատվիայի և Նորվեգիայի տվյալները բացակայում են:

[15] Հարավային Եվրոպայի երկրներից աղյուսակում ներկայացված ցուցանիշներն ընդգրկում են հետևյալ երկրները՝ *Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Հունաստան, Վատիկան, Իտալիա, Կոսովո, Մալթա, Մոնտենեգրո, Սերբիա, Սլովենիա, Իսպանիա: Մինչդեռ ներառված չեն հետևյալ երկրները՝ Անդորրա, Հյուսիսային Մակեդոնիա, Պորտուգալիա և Սան Մարինո*:

[16] Արևմտյան Եվրոպա՝ *Ավստրիա, Գերմանիա, Լիխտենշտեյն, Մոնակո*: Բելգիայի, Ֆրանսիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների և Շվեյցարիայի տվյալները հասանելի չեն:

որ, ըստ UNODC-ի հրապարակած տվյալների, կիբեռխարդախությունների թիրախում ամենից հաճախ հայտնվում է Եվրոպան, իսկ ավելի հազվադեպ՝ Աֆրիկան: Օվկիանիան, որն ընդգրկում է Նոր Զելանդիան և Ավստրալիան, տվյալների բացակայության պատճառով ընդգրկված չէ գծապատկերում (նաև աղյուսակ 1-ում):

Զարգացման մակարդակը տարածաշրջանում, ինչ խոսք, ազդում է կիբեռհանցավորության տարածվածության վրա, քանի որ դա ենթադրում է մտավոր ներուժի և մասնագիտական հմտությունների տիրապետող «խաղացողների» ներգրավվածություն: Թեպետ, մյուս կողմից, կիբեռհարձակումների թիրախ կարող են դառնալ նաև առցանց տիրույթում համեմատաբար թույլ պաշտպանական միջոցներ կիրառող, մասնավորապես՝ SS ոլորտում լուրջ առաջընթաց չարձանագրած երկրները:

Ինչևիցե, գծապատկեր 1-ում կիբեռխարդախությունների դեպքերի գծով արձանագրված միտումների՝ մյուս տարածաշրջանների (հատկապես՝ Ամերիկայի) կասկածելի ցածր ցուցանիշը մեզ ստիպում է առկա վիճակի հիմնավորման համար տրամաբանական եզրեր փնտրել:

Աղյուսակ 1-ում ամփոփված է կիբեռխարդախությունների վերաբերյալ UNODC-ի տվյալների բացվածքն ըստ տարածաշրջանների: UNODC-ի հրապարակած տվյալներից ակնհայտ է դառնում, որ 2015-2022 թթ. կիբեռխարդախությունների առյուծի բաժինը կամ 85.6-95.3%-ը կենտրոնացած է Եվրոպայում: Ամերիկայում գրանցվել է կիբեռխարդախությունների 3.8–12.7%-ը (ինչն անընկալելի ցածր ցուցանիշ է, եթե հաշվի առնենք ԱՄՆ-ի SS ոլորտի զարգացման բարձր մակարդակը), Ասիայում՝ 0.9–4.4%-ը, իսկ Աֆրիկայի մասնաբաժինը տատանվում է 0–0.03%-ի սահմաններում: Այսպես՝ 2022 թ. UNODC-ի կողմից հաշվառված կիբեռխարդախությունների դեպքերի 86.9%-ը (719,660 դեպք) կատարվել է Եվրոպայում, 8.7%-ը (72,158 դեպք)՝ Ամերիկայում, 4.4%-ը (36,034 դեպք)՝ Ասիայում և գրեթե 0.03%-ը (ընդամենը 222 դեպք)՝ Աֆրիկայում:

Աղյուսակում Հյուսիսային Ամերիկա տարածաշրջանը ներկայացված է բացառապես ըստ Կանադայի ցուցանիշի: Ըստ այդմ՝ Կանադայում կիբեռխարդախությունների դեպքերը 2021-2022 թթ. գերազանցել են Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի 21 երկրների գումարային ցուցանիշը: Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրներից կիբեռխարդախությունների ավելի հաճախ ենթարկվում են Կոստա Ռիկան և Պերուն: Կոստա Ռիկայում 2022 թ. գրանցվել է կիբեռխարդախության 12,690 դեպք (41.2%-ն ամբողջ տարածաշրջանում), իսկ Պերուում՝ 11,970 դեպք (38.8%-ը՝ տարածաշրջանում):

Ասիայի ենթատարածաշրջաններից Արևելյան Ասիայի և Արևմտյան Ասիայի ցուցանիշները բավական ցածր են, Կենտրոնական Ասիայի տվյալները հասանելի չեն, այնպես որ, կիբեռխարդախություններով «ախտահարման բախտ» վիճակվել է Հարավարևելյան Ասիային՝ ի դեմս Սինգապուրի (24,605 դեպք՝ 2022 թ.) և Թաիլանդի (10,143 դեպք՝ 2022 թ.):

Առաջատարի դիրքում հայտնված Եվրոպայում, ըստ UNODC-ի տվյալների, կիբեռխարդախությունների «ձգողության կենտրոնը» Գերմանիան է, որտեղ 2022 թ. գրանցվել է 243,358 դեպք, ինչը համարժեք է Արևմտյան Եվրոպայի տարածաշրջանին բաժին հասած կիբեռխարդախությունների 92.9%-ին և ամբողջ Եվրոպայի 29.4%-ին:

Հաջորդիվ Հարավային Եվրոպա ենթատարածաշրջանում տեղակայված Իտալիան և Իսպանիան են, որոնց բաժին է ընկել Հարավային Եվրոպայում 2022 թ. գրանցված կիբեռխարդախությունների շուրջ 93%-ը: Իսպանիայում 2022 թ. գրանցվել է կիբեռխարդախության 233,932 դեպք, ինչը համարժեք է Եվրոպայում գրանցված դեպքերի ընդհանուր թվի 28.3%-ին: Իտալիայի «հաջողություններն» ավելի համեստ են. 2022 թ. երկիրը թիրախ է դարձել կիբեռխարդախության 101,698 դեպքի՝ կենտրոնացնելով Եվրոպայում նման դեպքերի 12.3%-ը:

Այդուհանդերձ, Եվրոպայի առաջանցիկ միտումներն ու Ամերիկայի տարօրինակ ցածր ցուցանիշները տվյալների ամբողջականության վերաբերյալ կասկածներ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

2001-2023 թթ. ԱՄՆ-ում հաղորդված կիբեռհանցագործությունների հետևանքով պատճառված դրամական վնասի տարեկան չափը (մլն ԱՄՆ դոլար)[17]

են հարուցում: Իսկապես, թեև UNODC-ի տվյալների շտեմարանը հանցավոր գործունեության վերաբերյալ համաշխարհային միակ ամփոփ աղբյուրն է, աղյուսակում տեղ գտած տարածաշրջաններից և ոչ մեկը ներկայացված չէ երկրների ամբողջական կազմով՝ տվյալների անհասանելիության պատճառով, ինչը որոշակիորեն խեղաթյուրում է իրականությունը:

Միաժամանակ, ԱՄՆ-ում կիբեռհանցագործությունների տարածվածության աճող միտումների վերաբերյալ տվյալներ է հրապարակում Statista վիճակագրական-վերլուծական հարթակը: Այսպես՝ գծապատկեր 3-ում արտացոլված է հաղորդված կիբեռհանցագործությունների հետևանքով պատճառված դրամական վնասի տարեկան չափն ԱՄՆ-ում՝ 2001-2023 թթ.: Կիբեռհանցագործությունների պատճառած դրամական վնասն ԱՄՆ-ում աճում է երկրաչափական պրոգրեսիայով: 2001 թ. դա գնահատվում էր ընդամենը 17.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2008 թ. ճգնաժամից հետո թռիչք արձանագրեց՝ 264.6 մլն-ից հասնելով 559.7 ԱՄՆ դոլարի: Առավել կտրուկ աճի ալիքը մեկնարկեց 2018 թ.՝ 2.710 մլն-ից 2023 թ. հասնելով մինչև 12.500 ԱՄՆ դոլարի: 2001-2023 թթ. ընթացքում ԱՄՆ-ում կիբեռհանցագործությունների հետևանքով պատճառված դրամական վնասն աճել է ավելի քան 702 անգամ:

Կանխատեսումների համաձայն՝ ԱՄՆ-ի կիբեռհանցագործությունների շուկան ապշեցուցիչ աճ կապահովի առաջիկա մի քանի տարիների ընթացքում՝ տարեկան աճի 12,5% տեմպով, 2027 թվականի ավարտին հասնելով 22 միլիարդ դոլարի[18]: Մեկ այլ կանխատեսմամբ՝ մինչև 2028 թվականը երկրում կիբեռհանցագործությունների արժեքը կկազմի 1,82 տրիլիոն ԱՄՆ դոլար[19]:

Հայաստանը ևս անմասն չի մնացել կիբեռհանցավորության թիրախ դառնալու հեռանկարից:

Համաձայն ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) տվյալների շտեմարանի՝ Հայաստանում 2015 թ. գրանցվել է կիբեռխարդախության 39, 2016 թ.՝ 48, 2017 թ.՝ 67, իսկ 2018 թ.՝ 51 դեպք: Հայաստանի տվյալները 2019-2022 թթ.-ի վերաբերյալ UNODC-ին հասանելի չեն[20]:

ՀՀ ոստիկանության տվյալներով

[17] Statista, Annual amount of monetary damage caused by reported cybercrime in the United States from 2001 to 2023 (in million U.S. dollars), Published by Ani Petrosyan, Apr 15, 2024, https://www.statista.com/statistics/267132/total-damage-caused-by-by-cybercrime-in-the-us/

[18] United States Cybercrime Market Overview 2024-2028, March 2024, p. 4 (26 p.), Reportlinker, https://www.reportlinker.com/market-report/Cybersecurity/517797

[19] Statista, The impact of cybercrime on companies in the U.S. - Statistics & Facts, Published by Ani Petrosyan, Feb 5, 2024, https://www.statista.com/topics/1731/smb-and-cyber-crime/#topicOverview

[20] UNODC, Corruption and economic crime / Fraud: Cyber-related (Cy), https://dataunodc.un.org/dp-crime-corruption-offences (Date of access: 01.10.2024).

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Կիբեռհանցավորության դրսևորումները ՀՀ-ում, 2022-2024 թթ.[21]

Կիբեռհանցավորության դրսևորումներ	2022 թ.	2023 թ.	2024 թ. / կիսամյակ
Էլեկտրոնային խարդախություն	568	697	249
Համակարգչային հափշտակություն	461	461	155
Համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ	32	61	6

(աղյուսակ 2)՝ Հայաստանում առավել տարածված են էլեկտրոնային խարդախության դեպքերը: 2022 թ. երկրում գրանցվել է էլեկտրոնային խարդախության 568, 2023 թ.-ին՝ 697, իսկ 2024 թ. առաջին կիսամյակում՝ 249 դեպք: Քիչ չեն նաև համակարգչային հափշտակության դեպքերը՝ 461-ական դեպք 2022 և 2023 թվականներին և դեռևս 155 դեպք՝ 2024 թ. առաջին կիսամյակում: Համակարգչային համակարգի և համապատասխան տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները պահանջում են SS ոլորտի բարձր որակավորում և լուրջ փորձառություն, ուստի դրանց մասով գրանցված դեպքերը համեմատաբար փոքր թիվ են կազմում:

Բնականաբար, նույնիսկ ոստիկանության կողմից հրապարակվող տվյալները լիարժեք կերպով չեն արտացոլում կիբեռհանցավորության տարածման իրական մակարդակը Հայաստանում, քանի որ ոչ բոլոր դեպքերում են տուժածները դիմում համապատասխան կառույցներ, ինչը, մասամբ, կապված է նաև հասարակության շրջանում կիբեռհանցագործների անորսալիության և կրած վնասների անվերադարձելիության ընկալումների հետ:

[21] Տվյալները տրամադրվել են ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ ՕՀՏ և ՀՀԴՊ վարչության Բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Jahankhani, Hamid & Al-Nemrat, A. & Hosseinian-Far, Amin. (2014). Cyber crime Classification and Characteristics. Chapter: 12, In book: Cyber Crime and Cyber Terrorism Investigator's Handbook, Elsevier Science, November 2014, pp. 149-164, 10.1016/B978-0-12-800743-3.00012-8.
2. Statista, Annual amount of monetary damage caused by reported cybercrime in the United States from 2001 to 2023 (in million U.S. dollars), Published by Ani Petrosyan, Apr 15, 2024, https://www.statista.com/statistics/267132/total-damage-caused-by-by-cybercrime-in-the-us/
3. Statista, Identity theft victims in selected countries 2022, Published by Ani Petrosyan, Sep 11, 2024, https://www.statista.com/statistics/1389318/identity-theft-victims-in-selected-countries/ (Accessed: 01.11.2024).
4. Statista, The impact of cybercrime on companies in the U.S. - Statistics & Facts, Published by Ani Petrosyan, Feb 5, 2024, https://www.statista.com/topics/1731/smb-and-cyber-crime/#topicOverview
5. United States Cybercrime Market Overview 2024-2028, March 2024, p. 4 (26 p.), Reportlinker, https://www.reportlinker.com/market-report/Cybersecurity/517797
6. UNODC data, Corruption and economic crime / Fraud: Cyber-related (Cy), https://dataunodc.un.org/dp-crime-corruption-offences

Анна ПАХЛЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

«КРИМИНОГЕННЫЙ» ИТ-ПРОГРЕСС: ГЛОБАЛЬНЫЕ ТЕНДЕНЦИИ КИБЕРПРИСТУПНОСТИ

Новые технологии создают новые виды преступности, одновременно расширяя возможности для традиционной преступной деятельности. Многие из широко распространенных сегодня киберпреступлений представляют собой цифровые усовершенствования традиционных преступлений, существовавших еще задолго до того, как был придуман корень «кибер».

Хотя статистика уровня и проявлений киберпреступности фрагментарна и весьма ограничена, анализ имеющихся данных показывает беспрецедентный рост объёмов и постоянное улучшение преступлений, совершаемых в киберпространстве во всем мире.

Ключевые слова: *киберпреступность, кибермошенничество, кибербезопасность, интернет, компьютеры*

Anna PAKHLYAN
Senior Researcher at «Amberd» Research Center,
PhD in Economics, Associate Professor, ASUE

SECURITY AND CHALLENGES .

"CRIMINOGENIC" IT PROGRESS: GLOBAL TRENDS IN CYBERCRIME

New technologies are creating new types of crime while expanding opportunities for traditional criminal activity. Many of today's widespread cybercrimes are digital enhancements of traditional crimes and have existed long before the word "cyber" was even coined.

Although statistics on the level and manifestations of cybercrime are fragmentary and limited, the analysis of available data shows an unprecedented growth in the volume and constant improvement of crimes committed in the cyber domain around the world.

Keywords: *cybercrime, cyber fraud, cyber security, internet, computers*